ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

«04» հունիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի ամբիոն

Հեղինակ՝ դասախոս Փահլևանյան Լ.Ա.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Էկոլոգիական իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

(հեռակա)

Դասիչ մասնագիտութուն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

«Էկոլոգիական իրավունք» դասընթացը միտված է ազգային և միջազգային օրենսդրության շրջանակներում շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման իրավական հիմքերի ուսումնասիրությանը: Ծրագրի ընթացքում ուսանողները կուսումնասիրեն էկոլոգիական իրավունքի հիմնական սկզբունքները, ինչպես նաև բնության պահպանության, բնապահպանական վնասների կանխարգելման և կայուն զարգացման հարցերը կարգավորող կանոնակարգերն ու իրավակիրառական պրակտիկան: Ծրագիրն ընդգրկում է թեմաների լայն շրջանակ, ներառյալ բնական ռեսուրսների իրավական կարգավիճակը, էկոլոգիական իրավախախտումների համար պատասխանատվությունը, վնասակար արտանետումների և թափոնների օգտագործման կարգավորումը, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների բնապահպանական գործունեության իրավական հիմքերը: Հատուկ ուշադրություն է դարձվում միջազգային բնապահպանական համաձայնագրերին և կայուն զարգացման սկզբունքներին: Ուսանողներն ուսումնասիրում են բնապահպանական վեճերի լուծման դատական և վարչական մեխանիզմները, վերլուծում են ԵԱՏՄ և ԵՄ օրենսդրությունը: Դասընթացը նախատեսում է նաև էկոլոգիական իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու պրակտիկայի վերլուծություն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային գործիքակազմի շրջանակներում:

Դասընթացի **նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ՀՀ-ում բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության իրավական խնդիրներին, մարդու էկոլոգիական իրավունքների պաշտպանության, էկոլոգիական իրավախախտումների համար կիրառվող պատասխանատվության, ռացիոնալ բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության գործիքների կիրառման, առանձին բնական ռեսուրսների օգտագործման և պահպանության իրավական հարցերին:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ **խնդիրները.**

- ծանոթացնել ուսանողներին էկոլոգիական կարգավորման իրավական սկզբունքներին և դրանց զարգացմանը միջազգային և ազգային իրավական համակարգերում,
- ուսումնասիրել շրջակա միջավայրի պաշտպանությունը կարգավորող նորմատիվ իրավական բազան, ներառյալ միջազգային էկոլոգիական համաձայնագրերը և կոնվենցիաները,
- ուսումնասիրել մարդու էկոլոգիական իրավունքների համակարգը,
- ուսումնասիրել բնական ռեսուրսների իրավական ռեժիմները և դրանց օգտագործման, պահպանության և իրավական պաշտպանության առանձնահատկությունները,
- ուսանողների շրջանում ձևավորել ունակություն՝ վերլուծելու էկոլոգիական իրավունքի նորմերը և կիրառելու դրանք մասնագիտական գործունեության մեջ, ներառյալ, էկոլոգիական վեճերը լուծելու շրջանակներում,
- կատարելագործել շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրավական երևույթների և դատական պրակտիկայի հետ աշխատելու հմտությունները,
- ուսումնասիրել էկոլոգիական իրավախախտումների համար պատասխանատվության իրավական մեխանիզմները, ներառյալ վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվությունը,
- ծանոթացնել բնապահպանական իրավակիրառմանը և իրավապաշտպան գործունեությանը հասարակության մասնակցության իրավական ասպեկտներին,
- նպաստել բնապահպանական քաղաքականության և իրավական նորմերի մշակմանն ու իրականացմանը մասնակցելու համար անհրաժեշտ մասնագիտական ունակությունների և գիտելիքների ձևավորմանը:

Դասընթացի օբյեկտը և առարկան

«Էկոլոգիական իրավունք» դասընթացի ուսումնասիրության օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք ծագում են մարդու և հասարակության՝ շրջակա միջավայրի հետ փոխգործակցության գործընթացում և կապված են բնության

պահպանության իրավական կարգավորման, բնական ռեսուրսների օգտագործման, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման հետ:

«Էկոլոգիական իրավունք» դասընթացի առարկան շրջակա միջավայրի պաշտպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման իրավական կարգավորումն է, ներառյալ իրավական նորմերը, սկզբունքներն ու մեխանիզմները, որոնք ուղղված են բնության վրա տնտեսական և այլ գործունեության վնասակար հետևանքների կանխարգելմանը և վերացմանը:

Դասընթացի մուտքային պահանջները

«Էկոլոգիական իրավունք» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ սահմանադրական, վարչական, քաղաքացիական և այլ ճյուղային իրավունքներից, քանի որ էկոլոգիական իրավունքը հիմնված է տարբեր իրավունքի ճյուղերում կիրառվող ընդհանուր իրավական նորմերի և ընթացակարգերի վրա:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

էկոլոգիական իրավունքի հիմնական հասկացությունները, էկոլոգիական իրավահարաբերությունների առանձնահատկությունները, ներառյալ դրանց սուբյեկտների իրավական կարգավիճակը և օբյեկտների իրավական բնութագրերը, բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության և օգտագործման ռեժիմները, շրջակա միջավայրի պահպանության ոլորտում կառավարման համակարգը, կառավարման գործառույթների բովանդակությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության տնտեսական և իրավական մեխանիզմը, հատուկ պահպանվող բնական տարածքների իրավական ռեժիմը. օտարերկրյա պետություններում շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում հասարակական հարաբերությունների կարգավորման հիմնական առանձնահատկությունները:

կարողանա՝

գործել էկոլոգիական իրավունքի իրավական հասկացություններով և կատեգորիաներով. վերլուծել իրավական փաստերը և դրանց հետ կապված էկոլոգիական և իրավական հարաբերությունները. գտնել, ուսումնասիրել, վերլուծել և գնահատել էկոլոգիական կառավարման ոլորտում հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը, մեկնաբանել և կիրառել էկոլոգիական օրենսդրության նորմերը, կայացնել որոշումներ և կատարել իրավական գործողություններ օրենքին համապատասխան. իրականացնել էկոլոգիական և իրավական ակտերի իրավական փորձաքննություն:

տիրապետի՝

էկոլոգիական և իրավական նորմերի ինքնուրույն ուսումնասիրության և վերլուծության մեթոդաբանությանը. էկոլոգիական իրավունքի վերաբերյալ իրավական տերմինաբանության. տարբեր իրավական երևույթների, իրավական փաստերի, էկոլոգիական և իրավական նորմերի և հողային իրավական հարաբերությունների վերլուծության հմտություններին. իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության հմտություններին, իրավական խնդիրների և իրավիճակների լուծման մեթոդաբանությանը, էկոլոգիական և իրավական նորմերի կիրառման հմտություններին և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում

ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար անհրաժեշտ իրավական միջոցներին:

Դասավանդման եղանակները և մեթոդները

«Էկոլոգիական իրավունք» դասընթացն իրականացվում է ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ, որոնք ուղղված են ուսանողների մոտ շրջակա միջավայրի պահպանության իրավական մեխանիզմների խորը ըմբռնման ձևավորմանը: Դասավանդումը ներառում է դասախոսություններ և սեմինարներ, որոնք կենտրոնացած են դասընթացի տեսական յուրացման և գիտելիքների գործնական կիրառման վրա: Դասախոսություններն ուղեկցվում են մուլտիմեդիա շնորհանդեսներով և դատական գործերի վերլուծությամբ, ինչը ուսանողներին հնարավորություն է տալիս իրական համատեքստում ուսումնասիրել էկոլոգիական իրավունքի արդի խնդիրները: Սեմինարներն անցկացվում են քննարկումների ձևաչափով, ինչը նպաստում է իրավական վերլուծության և փաստարկման հմտությունների զարգացմանը: Կարևոր տեղ է հատկացվում խմբային աշխատանքներին, որի ընթացքում ուսանողները մշակում են էկոլոգիական խնդիրների լուծման իրենց իրավական առաջարկները:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 6 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 3-րդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. **Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝**	**144**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**10**
1.1.1. Դասախոսություններ	**4**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**6**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել)	
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Բնության և հասարակության փոխազդեցության հիմնախնդիրները	**3**	**1**	**2**

Թեմա 2. Էկոլոգիական իրավունք. հասկացությունը, համակարգը և մեթոդները	**2**	**1**	**1**
Թեմա 3. Բնական ռեսուրսների սեփականության իրավունք	**3**	**1**	**2**
Թեմա 4. Բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության տեղեկատվական ապահովման իրավական հիմքերը	**2**	**1**	**1**
Ընդամենը	**10**	**4**	**6**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Բնության և հասարակության փոխազդեցության հիմնախնդիրները

Բնությունը՝ որպես մարդու կենսագործունեության հիմք: Մարդ-բնություն փոխահարբերության հայեցակարգերը: Էկոլոգիական հիմնախնդիրների պատճառները աշխարհում և Հայաստանում: Էկոլոգիական իրավունքի զարգացման պատմությունը:

Թեմա 2. Էկոլոգիական իրավունք. հասկացությունը, համակարգը և մեթոդները

Էկոլոգիական իրավունք հասկացությունը, առարկան և մեթոդները: Էկոլոգիական իրավունքը որպես իրավունքի համալիր ճյուղ և դրա հարաբերակցությունն իրավունքի այլ ճյուղերի հետ: Էկոլոգիական իրավունքի համակարգը: Էկոլոգիական իրավունքը որպես ճյուղային իրավաբանական գիտություն և ուսումնական դասընթաց:

Թեմա 3. Էկոլոգիական իրավունքի սկզբունքները և աղբյուրները

Էկոլոգիական իրավունքի սկզբունքներ հասկացությունը: Էկոլոգիական իրավունքի սահմանադրական սկզբունքները: Էկոլոգիական իրավունքի ճյուղային սկզբունքները: Միջազգային էկոլոգիական իրավունքի սկզբունքները: Էկոլոգիական իրավունքի աղբյուրներ հասկացությունը և համակարգը: ՀՀ Սահմանադրությունը՝ որպես ՀՀ էկոլոգիական իրավունքի աղբոյւր: Միջազգային պայմանագրերը՝ որպես ՀՀ էկոլոգիական իրավունքի աղբյուր: Օրենքները և այլ իրավական ակտերը՝ որպես ՀՀ էկոլոգիական իրավունքի աղբյուր:

Թեմա 4. Միջազգային էկոլոգիական իրավունք

Միջազգային էկոլոգիական իրավունքի առարկան: Միջազգային էկոլոգիական իրավունքի աղբյուրները: Շրջակա միջավայրի պահպանության միջազգային կազմակերպությունները:

Թեմա 5. Մարդու էկոլոգիական իրավունքներ

Մարդու էկոլոգիական իրավունքների հասկացությունը և համակարգը: Մարդու էկոլոգիական իրավունքների սահմանադրական հիմունքները: Առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունք: Էկոլոգիական տեղեկատվություն ստանալու իրավունք: Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին մասնակցության իրավունք: Արդարադատության մատչելիության իրավունքը՝ որպես էկոլոգիական իրավունքների իրականացման երաշխիք:

Թեմա 6. Բնական ռեսուրսների սեփականության իրավունք

Բնական ռեսուրսների սեփականության իրավունքի հասկացությունը և ձևերը: Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի տարրերը: Բնական ռեսուրսների սեփականության իրավունքի ծագման և դադարման հիմքերը:

Թեմա 7. Բնական ռեսուրսների օգտագործման իրավունք

Բնական ռեսուրսների օգտագործման իրավունքի հասկացությունը և տարրերը: Բնօգտագործման իրավունքի տեսակները: Բնօգտագործման իրավունքի ծագման և դադարման հիմքերը:

Թեմա 8. Բնական ռեսուրսների պետական կառավարման հիմքերը

Բնական ռեսուրսների պետական կառավարման հիմքերի հասկացությունը: Բնական ռեսուրսների պետական կառավարման մարմինների համակարգը: Բնական ռեսուրսների պետական կառավարման մարմինների գործառույթների ընդհանուր բնութագիրը:

Թեմա 9. Բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության տեղեկատվական ապահովման իրավական հիմքերը

Էկոլոգիական տեղեկատվության ձևավորման աղբյուրները: Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների մոնիթորինգ: Բնական ռեսուրսների կադաստր: Բնական ռեսուրսների հաշվառում և հաշվետվությունների ներկայացում:

Թեմա 10. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննության հասկացությունները և սկզբունքները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության անցկացման կարգը: Շրջակա միջավայրի վրա անդրսահմանային ազդեցության գնահատում: Ռազմավարական էկոլոգիական գնահատում:

Թեմա 11. Բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության թույլտվությունների ու պայմանագրերի իրավական հիմքերը

Բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության թույլտվությունների ու պայմանագրերի համակարգը: Բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության թույլտվությունների տրամադրման և պայմանագրերի կնքման իրավական հիմքերը:

Թեմա 12. Շրջակա միջավայրի որակի կառավարումը

Էկոլոգիական նորմավորում և ստանդարտացում: Էկոլոգիական սերտիֆիկացում: Էկոլոգիական աուդիտ: Էկոլոգիական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում:

Թեմա 13. Էկոլոգիական վերահսկողություն

Էկոլոգիական վերահսկողություն հասկացությունը, խնդիրները և սկզբունքները: Էկոլոգիական վերահսկողության տեսակները և ձևերը:

Թեմա 14. Իրավաբանական պատասխանատվությունը էկոլոգիական օրենսդրության խախտման համար

Էկոլոգիական իրավախախտում հասկացությունը և կառուցվածքը: Էկոլոգիական իրավախախտումների դասակարգումը: Էկոլոգիական օրենսդրության խախտումների համար պատասխանատվություն հասկացությունը և գործառույթները: Կարգապահական, վարչական, քրեական և քաղաքացիաիրավական պատասխանատվությունը էկոլոգիական իրավախախտումների և էկոլոգիական վնասի համար:

Հարցաշար

Հարցաշար.

1. Բնությունը՝ որպես մարդու կենսագործունեության հիմք: Մարդ-բնություն փոխահարբերության հայեցակարգերը:
2. Էկոլոգիական իրավունք հասկացությունը, առարկան և մեթոդները:
3. Էկոլոգիական իրավունքը որպես իրավունքի համալիր ճյուղ և դրա հարաբերակցությունն իրավունքի այլ ճյուղերի հետ:
4. Էկոլոգիական իրավունքի համակարգը: Էկոլոգիական իրավունքը որպես ճյուղային իրավաբանական գիտություն և ուսումնական դասընթաց:
5. Էկոլոգիական իրավունքի սկզբունքներ հասկացությունը: Էկոլոգիական իրավունքի սահմանադրական սկզբունքները:

6. Էկոլոգիական իրավունքի ճյուղային սկզբունքները: Միջազգային էկոլոգիական իրավունքի սկզբունքները: Էկոլոգիական իրավունքի աղբյուրներ հասկացությունը և համակարգը:
7. ՀՀ Սահմանադրությունը՝ որպես ՀՀ էկոլոգիական իրավունքի աղբյուր:
8. Միջազգային պայմանագրերը՝ որպես ՀՀ էկոլոգիական իրավունքի աղբյուր: Օրենքները և այլ իրավական ակտերը՝ որպես ՀՀ էկոլոգիական իրավունքի աղբյուր:
9. Միջազգային էկոլոգիական իրավունքի առարկան: Միջազգային էկոլոգիական իրավունքի աղբյուրները:
10. Մարդու էկոլոգիական իրավունքների հասկացությունը և համակարգը: Մարդու էկոլոգիական իրավունքների սահմանադրական հիմունքները:
11. Առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունք: Էկոլոգիական տեղեկատվություն ստանալու իրավունք:
12. Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին մասնակցության իրավունք:
13. Արդարադատության մատչելիության իրավունքը՝ որպես էկոլոգիական իրավունքների իրականացման երաշխիք:
14. Բնական ռեսուրսների սեփականության իրավունքի հասկացությունը և ձևերը: Բնական ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի տարրերը:
15. Բնական ռեսուրսների օգտագործման իրավունքի հասկացությունը և տարրերը: Բնօգտագործման իրավունքի տեսակները:
16. Բնական ռեսուրսների պետական կառավարման հիմքերի հասկացությունը: Բնական ռեսուրսների պետական կառավարման մարմինների համակարգը: Բնական ռեսուրսների պետական կառավարման մարմինների գործառույթների ընդհանուր բնութագիրը:
17. Էկոլոգիական տեղեկատվության ձևավորման աղբյուրները: Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների մոնիթորինգ:
18. Բնական ռեսուրսների կադաստր: Բնական ռեսուրսների հաշվառում և հաշվետվությունների ներկայացում:
19. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննության հասկացությունները և սկզբունքները:
20. Շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության անցկացման կարգը:
21. Շրջակա միջավայրի վրա անդրսահմանային ազդեցության գնահատում:
22. Ռազմավարական էկոլոգիական գնահատում:
23. Էկոլոգիական նորմավորում և ստանդարտացում:
24. Էկոլոգիական սերտիֆիկացում: Էկոլոգիական աուդիտ:
25. Էկոլոգիական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում:
26. Էկոլոգիական վերահսկողություն հասկացությունը, խնդիրները և սկզբունքները:
27. Էկոլոգիական վերահսկողության տեսակները և ձևերը:
28. Էկոլոգիական իրավախախտում հասկացությունը և կառուցվածքը: Էկոլոգիական իրավախախտումների դասակարգումը:
29. Էկոլոգիական օրենսդրության խախտումների համար պատասխանատվություն հասկացությունը և գործառույթները:
30. Կարգապահական պատասխանատվությունը էկոլոգիական իրավախախտումների համար:
31. Վարչական պատասխանատվությունը էկոլոգիական իրավախախտումների համար:
32. Քրեական պատասխանատվությունը էկոլոգիական իրավախախտումների համար:
33. Քաղաքացիաիրավական պատասխանատվությունը էկոլոգիական վնասի համար:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

- Աիդա Բագրատի Իսկոյան, Օլիմպիա Մարտինի Գեղամյան, Հեղինե Սոկրատի Գրիգորյան. «ՀՀ էկոլոգիական իրավունք. ընդհանուր մաս» Երևան 2020. «Հայրապետ»
- Бринчук М.М. Экологическое право. Учебник. М.: 2005.
- Экологическое право. Учебник. 2-е изд. Под ред. С.А. Боголюбова. М.: 2010.
- Исмаилова Э.Ю., Трунцевский Ю.В. Экологическое право. Учебник. М.: 2008.
- Дубовик О.Л. Экологическое право. Учебник. М.: 2005.